ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ---------- 2011 թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԼԵՄՎԵԼ ՎԱԼԵՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*՝

1. Տալ համաձայնություն աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, Ռուսաստանի Դաշնության կրթության ակադեմիայի ակադեմիկոս Լեմվել Վալեսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոց-3 շենք հասցեում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Ա. ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՄՎԵԼ ՎԱԼԵՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Երևանի Պետական Համալսարանի ռեկտոր Ա. Սիմոնյանի 24.05.2011թ. № 01/373 միջնորդությունը, ինչպես նաև ակադեմիկոս Վալեսյանի ներդրած մեծ ավանդը Հայաստանի գիտության և կրթության զարգացման գործում:

Լեմվել Վալեսյանը եղել է Երևանի Պետական Մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, Երևանի Պետական Համալսարանի աշխարհագրության ֆակուլտետի դեկան, Երևանի Պետական Համալսարանի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ, Ռուսաստանի Դաշնության Կրթության ակադեմիայի ակադեմիկոս: Հեղինակ է 340 գիտական աշխատանքների, այդ թվում 35 մենագրությունների, ատլասների, բուհական և դպրոցական դասագրքերի: Նրա խմբագրությամբ ստեղծվել է «Հայաստանի ազգային ատլասը»:

Անդամակցում էր Էկոլոգիայի և Ինֆորմատիկայի միջազգային ակադեմիաներին: 2011թ. հոկտեմբերի 17-ին լրանում է մեծ գիտնականի մահվան երկու տարին:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Ա. ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՄՎԵԼ ՎԱԼԵՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Լեմվել Վալեսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Ա. ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԼԵՄՎԵԼ ՎԱԼԵՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Լեմվել Վալեսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Ա. ԵՐՆՋԱԿՅԱՆ